ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 8(78), 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2025թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրի և Հայաստանյան խաղաղության նախաձեռնության (API) միջև ձևավորված արդյունավետ համագործակցության ամրապնդման և ընդլայնման համատեքստում սույն թվականի հոկտեմբերի 23-ին Կրթահամալիրի ռեկտոր Մանուկ Մուրադյանն ընդունեց Հայաստանյան խաղաղության նախաձեռնության առաջին բուժօգնության ուսուցման ծրագրի ղեկավար պարոն Պատրիկ Ապրիլին:

Պ.Ապրիլը նշեց, որ ներկայումս Հայաստանյան խաղաղության նախաձեռնությունն առաջին բուժօգնության ուսուցման ծրագրի շրջանակներում իրականացնում է դասընթացներ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում և հարակից սահմանամերձ համայնքներում՝ ընդգրկելով համայնքային աշխատողների և կամավորների: Նրա խոսքով՝ նման ուսուցողական ծրագրերը կարևոր են հատկապես սահմանամերձ համայնքներում բնակչության անվտանգության մակարդակը բարձրացնելու, արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման կարողությունները զարգացնելու և համայնքային դիմադրողականությունն ամրապնդելու տեսանկյունից: Նա համոզմունք հայտնեց, որ Կրթահամալիրի հետ համագործակցության ամրապնդումը հնարավորություն կտա այդ ծրագիրը դարձնել առավել համակարգված, կայուն և արդյունավետ:

Ռեկտոր Մ. Մուրադյանը նշեց, որ Կրթահամալիրը մշտապես կարևորում է տեղական և միջազգային գործընկերների հետ համագործակցությունը հատկապես այն ուղղություններով, որոնք միտված են հանրային անվտանգության ապահովմանը, արտակարգ իրավիճակներում բնակչության պատրաստվածությանը և գիտելիքների զարգացմանը: Նա ընդգծեց, որ Կրթահամալիրը պատրաստ է ոչ միայն շարունակել արդեն ձևավորված արդյունավետ համագործակցությունն առաջին բուժօգնության դասընթացների շրջանակում, այլև ընդլայնել փոխգործակցությունը Հայաստանյան խաղաղության նախաձեռնության կողմից իրականացվող այլ կրթական, հումանիտար և հանրային իրազեկման ծրագրերի ուղղությամբ:

Կողմերը քննարկեցին նաև նախկինում արդեն կնքված համագործակցության հուշագրի դրույթների վերանայման և ընդլայնման հնարավորությունները:

Հանդիպումն ավարտվեց փոխադարձ պատրաստակամության և գործընկերային հարաբերությունների հետագա խորացման մասին շեշտադրումներով:

ԹԻՎ 181 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Հոկտեմբերի 29-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիր էին այցելել Երևանի թիվ 181 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները՝ ուսուցիչ Ա.Սնխչյանի ուղեկցությամբ:

Աշակերտները շրջել են Կրթահամալիրի տարածքում, որի ընթացքում Կրթահամալիրի ոստիկանության պատմության թանգարանի առաջատար մասնագետ Դ.Հովսեփյանը և՛ Կրթահամալիրի, և՛ Ոստիկանության անցած ուղու պատմական անդրադարձ է կատարել: Մասնավորապես, Դ.Հովսեփյանը հյուրերին ներկայացրել է Արամ Մանուկյանից մինչև մեր օրերը Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետերի, ՆԳ նախարարների դիմանկարները, ապա ուղեկցել Հայրենական մեծ պատերազմի մասնակից, Սովետական միության հերոսներ ՆԳ աշխատակիցներին նվիրված հուշապատի և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ ու Արցախյան հերոսամարտում զոհված ՆԳ աշխատողների հուշակոթողի մոտ:

▶ 2

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ՝ Ի ԿԱՏԱՐՈՒՄՆ

«ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 25.09.2025թ. ԹԻՎ 67-Լ ՀՐԱՄԱՆԻ

Իկատարումն «Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարությունից բխող գործողությունների 2024-2026 թթ. ծրագրի» 3-րդ՝ «Կրթական միջավայրի բարելավում, ոստիկանության կադրային պատրաստում, մասնագիտական զարգացում» ուղղության, «Ոստիկանության ղեկավար կազմի (այդ թվում՝ Ոստիկանապետի և Ոստիկանապետի տեղակալների) և ծառայողների վերապատրաստումների իրականացում» գործողության՝ ՀՀ ներքին գործերի նախարարի 25.09.2025թ. թիվ 67-Լ հրամանով հաստատվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների տարեկան վերապատրաստումների պլանի մշակման մեթոդաբանությունը: Հիշյալ հրամանի պահանջները կատարելու նպատակով ս.թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում կազմակերպվել է աշխատաժողով՝ «Ոստիկանության ծառայողների տարեկան վերապատրաստումների պլանի մշակման մեթոդաբանության ներդրումն ու գործնական կիրառումը» խորագրով, որին հրավիրվել էին նաև ներկայացուցիչներ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունից, Ոստիկանության հենասյունային չորս ուղղություններից:

Քննարկվեցին «Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը ոստիկանության ծառայողների վերապատրաստման գործընթացում. տեսություն և գործնական կիրառություն», «Հոգեբանական բաղադրիչի դերը ոստիկանության ծառայողների վերապատրաստման մեթոդաբանության համատեքստում» և «Վերապատրաստման դասընթացների որակի ապահովման մեխանիզմներ. մոնիթորինգ, հետադարձ կապ և շարունակական զարգացում» հարցերը: Աշխատաժողովի արդյունքներն ամփոփեց ռեկտոր Մ. Մուրադյանը՝ առանցքային համարելով վերապատրաստման գործընթացում ըստ ուղղությունների ոստիկանական ստորաբաժանումներից ստացվող գործնական արձագանքներն ու կարիքների արդյունավետ գնահատման հիման վրա ձևավորվող առաջարկները: Ըստ ռեկտորի՝ միայն տեղերից ստացվող գործուն աջակցության, ինչպես նաև ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության հետ համագործակցության շնորհիվ Կրթահամալիրը ոստիկանության ծառայողների շարունակական մասնագիտական զարգացումն ապահովելու համար կկարողանա իրականացնել արդյունավետ դասընթացներ՝ արդիականացնելով վերջիններիս գիտելիքները, նպաստելով ներկա պահանջներին համահունչ ոստիկանի արժեքաբանական կողմնորոշման ձևավորմանը: Վերապատրաստումներին ներկայացվող խնդիրներին լուծում տալու նպատակով Մ. Մուրադյանը կարևորեց նաև նույն ձևաչափով աշխատանքային քննարկումների անցկացումը:

ԹԻՎ 181 ՏԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

1 ◀ Աշակերտների շրջայցը եզրափակվել է Ոստիկանության պատմության թանգարանում: Ի թիվս ցուցադրված ֆոնդերի՝ Դ.Հովսեփյանը ներկայացրել է մ.թ. 367 թվականին Մեծ Հայքի արքա Արշակ Բ Արշակունու և Ոստանիկ Դրաստամատի ինքնասպանության դեպքը, ցարական Ռուսաստանում Արևելյան Հայաստանի ձևավորման գործընթացը, առաջին Հանրապետության կազմավորումը, սովետական միլիցիայի դարաշրջանը, անկախության շրջանից մինչև մեր օրերը և այդ ընթացքում ՆԳՆ տարբեր ստորաբաժանումների կողմից կատարված հայրենանվեր աշխատանքն իրավակարգի ապահովման և հանցագործությունների դեմ պայքարում:

Հյուրերը տպավորված հրաժեշտ են տվել Կրթահամալիրին՝ գրառում թողնելով Պատվավոր հյուրերի գրքում:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԸ ՀԱՄԱԼՐՈՒՄ Է ԻՐ ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԸ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կանոնադրական նպատակներից են հանրային անվտանգության ոլորտում, այդ թվում՝ ոստիկանական և փրկարարական կրթությամբ մասնագետների պատրաստումը, ոստիկանության և փրկարար ծառայության ծառայողների, ինչպես նաև ՆԳ նախարարության կարիքների համար համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող անձանց վերապատրաստումը և այլ գործառույթներ:

Որակյալ կրթության կազմակերպման համար բարենպաստ պայմանների ստեղծումը ՆԳՆ բարեփոխումների առաջնահերթություններից է, ըստ այդմ՝ ուսումնառությունը հավուր պատշաճի կազմակերպելու համար, համաձայն ժամանակացույցի, Կրթահամալիրում գնահատվում են կրթական միջավայրի բարելավմանն ուղղված անհրաժեշտ ենթակառուցվածքները, նյութատեխնիկական հագեցվածությունը, իրականացվում են կրթական և մյուս տարածքների ձևավորման աշխատանքներ: Ելնելով կրթական միջավայրի բարելավման անհրաժեշտությունից՝ ՆԳՆ կրթահամալիրի 9-հարկանի մասնաշենքի 8-րդ և 9-րդ հարկերում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ. յուրաքանչյուր հարկի հինգական լսարաններ վերանորոգվել և կահավորվել են արդիական պահանջներին համապատասխան՝ համալրելով Կրթահամալիրի տեխնիկապես հագեցված լսարանային ֆոնդը:

Կրթահամալիրում տեխնիկատնտեսական ու լոգիստիկ կարիքների գնահատման հիման վրա լսարանների վերազինմանը և կրթական միջավայրի բարելավմանը միտված աշխատանքները շարունակական բնույթ են կրում՝ առաջիկայում ևս նախատեսելով շինարարական աշխատանքների իրականացում՝ ի նպաստ սովորողների գիտելիքների, հմտությունների և գործնական կարողությունների ձեռքբերմանն ու կատարելագործմանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ՝ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ

Հոկտեմբերի 9-ին ՆԳՆ կրթահամալիրում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում, որի նպատակն էր գնահատել կրթական գործընթացը, դրանց բարելավման հնարավորությունները, որպեսզի որակի ապահովման մեխանիզմներն ավելի ամբողջական արտացոլվեն ներկայացվող հաշվետվություններում:

Հանդիպումը վարեց Կրթության որակի ապահովման բաժնի պետ Տիգրան Խաչատրյանը, ով ներկայացրեց ընթացիկ մոնիթորինգի, գնահատման և շարունակական բարելավման սկզբունքները՝ հիմք ընդունելով կրթական որակի կառավարման ՊԻՍԲ (PDCA)՝ «Պլանավորում - Իրականացում - Ստուգում - Բարելավում» շրջափուլը:

Քննարկման ընթացքում մասնակիցներն անդրադարձան կրթական գործընթացների արդյունավետության գնահատման մեթոդներին, ուսուցման որակի բարձրացման կարևորությանը, տվյալների վրա հիմնված որոշումների կայացման անհրաժեշտությանը, ինչպես նաև Կրթահամալիրի ընդհանուր զարգացման վրա ներքին և արտաքին ստուգումների ներդրման դրական ազդեցությանը:

Տիգրան Խաչատրյանը շեշտեց, որ ընթացիկ մոնիթորինգը և հետադարձ կապը կարևոր գործիքներ են ոչ միայն վերահսկման, այլև բարելավման մշակույթ ձևավորելու համար: Քննարկման արդյունքում հնչեցին մի շարք առաջարկներ, որոնք Կրթահամալիրի ստորաբաժանումներին կօգնեն առավել արդյունավետ կազմակերպել գնահատման գործընթացները և ապահովել դրանց շարունակական կատարելագործումը:

Հանդիպման եզրափակիչ մասում մասնակիցները կարևորեցին համատեղ աշխատանքը, բաց հաղորդակցությունը և տվյալների համակարգված օգտագործումը կրթության որակի կայուն բարելավման համար:

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՈՆ՝ ՀԱՅ ԳՐԻ, ԼԵԶՎԻ ՈՒ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՓԱՌԱԲԱՆՈՒՄ

Հոկտեմբերի վերջին շաբաթը հայ մշակույթի ու կրթության համար ունի առանձնահատուկ նշանակություն: Հայ Առաքելական Եկեղեցին նշում է Սուրբ Թարգմանչաց տոնը, որը նվիրված է հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային վերածննդի հիմնադիրներին՝ Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթևին և նրանց աշակերտներին:

Թարգմանչաց տոնը խորհրդանշում է հայ գրի ստեղծումն ու քրիստոնեության տարածումը հայ ժողովրդի շրջանում: 5-րդ դարում, երբ Հայաստանում արդեն քրիստոնեությունը պետական կրոն էր, կար մեծ անհրաժեշտություն Աստվածաշունչը և կրոնական գրականությունը թարգմանելու հայերեն: Սակայն առանց մայրենի գրի դա անհնար էր: Եվ Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների հետ ստեղծեց հայոց այբուբենը (405 թ.), ինչից հետո սկիզբ առավ թարգմանչական ահռելի գործունեությունը:

Սուրբ Թարգմանիչներ են համարվում ոչ միայն Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը, այլև նրանց աշակերտներն ու հետևորդները՝ Եզնիկ Կողբացին, Ղազար Փարպեցին, Կորյունը, Հովսեփ Բաղնեցին և Մովսես Խորենացին: Նրանք համարվում են հայ գրականության հիմնադիրները, քանի որ ոչ միայն թարգմանեցին Աստվածաշունչը, այլև հիմք դրեցին հայ գեղարվեստական, պատմական և փիլիսոփայական գրականությանը:

Նրանց շնորհիվ Հայաստանը դարձավ գրական, կրթական և հոգևոր կենտրոն, իսկ հայերենը՝ լիարժեք գրական լեզու:

Թարգմանչաց տոնն այսօր ունի ոչ միայն կրոնական, այլև մշակութային և կրթական նշանակություն: Այն դարձել է հայ գրականության, կրթության, ուսուցչի և թարգմանչի արժեքը բարձրացնող օր: Այս տոնն առիթ է գնահատելու մայրենի լեզուն, կրթության դերը և այն մարդկանց, ովքեր սերունդներին փոխանցում են գիտելիք, մշակույթ և հավատ:

Բազմաթիվ դպրոցներում, համալսարաններում ու մշակութային հաստատություններում անցկացվում են միջոցառումներ, գրական երեկոներ, բանավեճեր և ցուցահանդեսներ՝ նվիրված Մաշտոցի և թարգմանիչների հիշատակին:

Թարգմանչաց տոնը հայ ժողովրդի լուսավորության տոնն է: Այն հիշեցնում է, որ ժողովուրդը, որն ունի իր այբուբենը, իր գրականությունը, իր լեզուն, ունի նաև ուժ՝ դիմակայելու պատմության փորձություններին: Մեսրոպ Մաշտոցի սրբագործված գործն այսօր էլ շարունակում է ոգեշնչել սերունդներին՝ պահելու և սիրելու հայերենը, կրթությունը և մշակույթը:

ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ



Հոկտեմբերի 2-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում տեղի ունեցավ ոստիկանական ուսումնական ստորաբաժանման միջին մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության 1-ին կուրսի սովորողների «Ոստիկանության ծառայողի երդման» հանդիսավոր արարողությունը: Ներկա էր Կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ղեկավար կազմը՝ ստորաբաժանման պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանի գլխավորությամբ:

Սովորողները եռագույնի ներքո մեծ ոգևորությամբ և խանդավառությամբ հանդիսավոր կերպով երդվեցին հավատարիմ լինել ՀՀ սահմանադրական կարգին, անվերապահորեն ղեկավարվել օրենքներով, պաշտպանել հայրենիքը, պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը, արդար և անկողմնակալ իրականացնել իրենց լիազորությունները, ազնիվ և բարեխիղճ կատարել ծառայողական պարտականությունները:

Արարողության ավարտին Գ. Գրիգորյանը շնորհավորեց սովորողներին և հաջողություններ մաղթեց ուսման մեջ:

ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵՎ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Սույն թվականի հոկտեմբերի 7-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում մեկնարկեց առցանց դասընթացների նախագծման և մատուցման վերաբերյալ դասախոսների վերապատրաստումը: Դասընթացը կազմակերպվել է Միգրացիայի միջազգային կազմակերպության և ՄԱԿ-ի՝ փախստականների հարցերով գործակալության կողմից իրականացվող «Հայաստանում միգրացիայի և ապաստանի արդյունավետ կառավարման քաղաքականության շրջանակի և կարողությունների ընդլայնում» ծրագրի շրջանակներում:

Դասընթացի մասնակիցները ոչ միայն Կրթահամալիրի հաստիքային և պայմանագրային դասախոսներ են, այլև ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության փորձառու աշխատակիցներ, որոնք նույնպես որպես դասախոսներ ներգրավվելու են միգրացիայի և քաղաքացիության ծառայության նորանշանակ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներում:

Դասընթացի սկզբում ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր Մանուկ Մուրադյանը, ով, ընդգծելով ներկա ժամանակաշրջանում առցանց ուսուցման գործիքակազմերի կարևորությունն ու ադյունավետությունը, շնորհակալություն հայտնեց դասընթացի կազմակերպմանն ու անցկացմանն իրենց ներդրումն ունեցած բոլոր անձանց և արդյունավետ վերապատրաստում մաղթեց բոլոր մասնակիցներին:

Առցանց դասընթացների նախագծման և մատուցման վերաբերյալ դասախոսների վերապատրաստումը կանցկացվի 4 օրում, որից հետո նրանց համար կանցկացվի նաև երկօրյա վերապատրաստում՝ դասավանդման մեթոդաբանության թեմայով:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Հոկտեմբերի 13-ին տեղի ունեցավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի 2025թ. 11-րդ նիստը: Օրակարգային հարցերի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը տպագրության երաշխավորեց Կրթահամալիրի միջազգային կապերի և համագործակցության աշխատանքները համակարգող պրոռեկտոր Արմինե Հայրապետյանի, համահեղինակներ՝ Ա. Միսակյանի, Ա. Գևորգյանի, Ս. Հայրապետյանի, Ի. Երմակովի, Ք. Լեհմանի և Բ. Ֆիշերի «Մայիսյան ջրհեղեղները Հայաստանում՝ 2024: Լոռու և Տավուշի մարզերում տեղի ունեցած աղետի փաստագրում և ընկալում: 2024թ. մայիսի 24-26 Իրադարձության վերլուծություն» (անգլերեն) և ոստիկանական ուսումնական ստորաբաժանման քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի պայմանագրային հիմունքներով դասախոս Արփի Լազարյանի՝ «Ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և դրանց կիրառման ու իմպլեմենտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» մենագրությունները:

Գիտական խորհրդի որոշմամբ ոստիկանական ուսումնական ստորաբաժանման «Իրավագիտություն» մասնագիտության բակալավրիատի առկա վճարովի ուսուցման 11 սովորողի հատկացվեց ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ հիմք ընդունելով նույն ստորաբաժանման ղեկավար կազմի պատրաստման դեպարտամենտի ուսումնասիրությունը:

Գիտական խորհրդի նիստն ամփոփվեց փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման «Կառավարում (Կառավարում (ըստ ոլորտի))» մասնագիտության բակալավրիատի հեռակա ուսուցման նախկին 3 սովորողի՝ Կրթահամալիրում վերականգնվելու համար ներկայացված դիմումների քննարկմամբ: Որոշում կայացվեց ուսումնառությունը շարունակելու համար վերջիններիս վերականգնել համապատասխան կուրսերում:

ԱՆՄՆԱՑՈՐԴ ՆՎԻՐՈՒՄՈՎ ԴԵՊԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ՓԾ ԵԿ ուսումնական ստորաբաժանման 4-րդ կուրսի սովորող Գագիկ Հայրիկյանի հետ:

- Դրվագներ, որ տպավորվել են մանկության տարիներից:

- Մանկական տարիներից շատ հիշողություններ կան, որ կարոտով եմ հիշում: Օրինակ՝ անհոգ խաղերը, երեխայական կռիվները, ընտանիքիս հետ անցկացրած ժամանակը և հասակ առած մարդկանց հետ հաճախակի շփումները: Բայց ամենաշատը տպավորվել է այն դրվագը, երբ առաջին անգամ հորս հետ այցելեցի Անդրանիկ Օզանյանի թանգարան, որտեղ մեծ հիացմունքով ուսումնասիրում էի նրա սպառազինությունն ու անձնական իրերը՝ մտովի փորձելով տեղափոխվել այդ ժամանակաշրջան:

- Կպատմե՞ս դպրոցական տարիներից:

- Դպրոցական տարիները մրցակցային տարիներ էին: Ընդ որում՝ ոչ թե դասընկերներիս, այլ ինքս ինձ հետ: Դրանում մեծ ներդրում ունեն ծնողներս՝ իրենց հետևողականությամբ, որոնց և՛ շնորհակալ, և՛ երախտապարտ եմ: Ամեն տարի նոր դասարան տեղափոխվելիս ինքս իմ առջև նոր նպատակներ էի դնում թե՛ հանրակրթական, թե՛ երաժշտական դպրոցում, թե՛ սպորտային խմբակում և, բնականաբար, դրանք իրականացնում էի:

- Ի՞նչ ես կարծում, կա՞ն վատ գրքեր:

- Այո՛, կարծում եմ՝ կան վատ գրքեր: Ճիշտ է, մեր բոլորի միտումը պետք է լինի անգամ վատ բաներից լավը սովորելն ու դասեր քաղելը, բայց կարծում եմ, որ կան գրքեր, որոնց վրա պետք չէ ավելորդ ժամանակ կորցնել:

- Քո ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը:

- Ինքս գրքեր շատ եմ սիրում կարդալ և ունեմ նախընտրելի գրքեր, որոնց թվին են դասվում՝

Ա. Դյումայի Կոմս Դը Մոնտե Քրիստո-ն, Ե. Վ. Տարլեյի Նապոլեոն-ը, Վ. Սարգսյանի Հացի փորձություն-ը, Վ. Սիրադեղյանի Դուռը, Հ. Մաթևոսյանի ստեղծագործությունները, Նարեկացու Մատյան ողբերգությունը, հայ առակագիրների ստեղծագործությունները և այլն:

Բայց ամենօրյա կարդացվող և ամենատպավորիչ գիրքը Գիրք Գրոցն է՝ Աստվածաշունչը: Չկա գեթ մեկ հարցի պատասխան, որը չունենա այս գիրքը, և այս գիրքն է, որ կերտում է մարդուն, տանում դեպի կատարելության ու հասցնում մարդկային սահմանափակությունից անդին: Այս գիրքը և՛ օրենքների ժողովածու է, և՛ սիրո մասին է՝ ամենախորին իմաստով, և՛ իմաստություն ու փիլիսոփայություն, և՛ քնարերգություն, և՛, իհարկե, պատմություն ու աստվածաբանություն: Եվ վերջապես, սա այն միակ գիրքն է, որի ընթերցման ժամանակ դրա Գրողը ներկա է:

- Խոսենք նախասիրություններից. ինչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Ամենամեծ նախասիրությունս պատմությունն է: Դա իմ տարերքն է: Ընդ որում՝ ոչ միայն հայ ժողովրդի պատմությունը, այլև տարբեր ազգերի պատմությունը, հատկապես՝ Մերձավոր Արևելքի ժողովուրդների: Պատմությունն օգնում է զարգացնել մտածողությունը, փորձել մի քանի քայլ առաջ մտածել և խուսափել այն բանից, ինչից արդեն մարդիկ տուժել են քեզնից առաջ:

Սիրելի զբաղմունքներից կառանձնացնեմ նաև սպորտը, գեղեցիկ Երևանով զբոսանքը և ընկերներիս հետ սրճարաններ այցելելը:

- Ինչի՞ մասին ես երազում կյանքիդ այս շրջանում:

▶ 4

ԱՆՄՆԱՑՈՐԴ ՆՎԻՐՈՒՄՈՎ ԴԵՊԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

3 ◀ - Ներկա պահին ոչ թե երազանքներ, այլ նպատակներ ունեմ, որոնց հասնելու մասին ժամանակն ինքը կբարձրաձայնի:

- Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

- Մասնագիտության ընտրության հարցում տատանվում էի քաղաքագիտության, տուրիզմի (որի բաժինը քոլեջում ավարտել էի գերազանցությամբ) և կառավարման մասնագիտությունների միջև: Բայց, հաշվի առնելով բնատուր հատկություններս, բնավորությունս, ծնողիս և այլ հարազատների խորհուրդն ու, միևնույն ժամանակ, հասկանալով ճգնաժամային կառավարիչների պակասը մեր հանրապետությունում, որոշեցի ընտրել հենց այս մասնագիտությունը:

- Ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

- Մեր կրթահամալիրը նոր է ձևավորվել: Այս կարճ ժամանակահատվածում ուսանողական խորհուրդը բավականին աշխատանք է կատարել, և, ելնելով սրանից, կարող եմ ասել, որ միտում կա, որ ամեն բան ավելի լավանա: Կարծում եմ, որ մենք՝ ուսանողներս, անկախ մասնագիտական կողմնորոշումից, կրթահամալիրի ղեկավարության հետ պիտի անենք ամեն ինչ՝ ուսանողական կյանքը լիարժեք դարձնելու համար:

- Նկարագրի՛ր Կրթահամալիրի սովորողի կերպարը:

- Կրթահամալիրի սովորողը պետք է տարբերվի մյուս բոլոր սովորողներից, և դրա պատճառն այն է, որ մեր սովորողների ապագան միտված է այսօրվա և վաղվա Հայաստանի Հանրապետությունն ավելի հզոր ու կայուն կառուցելուն: Այս բուհն ընտրած սովորողը պետք է գիտակցի, որ կրթահամալիրում սովորելը պետք է իր մեջ ձևավորի պետականամետ մտածելակերպ, և որ վաղը ինքն է լինելու պետական ապարատում պետություն կառուցողներից մեկը:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունդ, ի՞նչ կընտրեիր:

- Մասնագիտությունս չէի փոխի, քանի որ, ելնելով մեր պետության կարիքներից, գիտակցում եմ այն փաստը, որ լավ կառավարիչներ պետք են յուրաքանչյուր ոլորտում: Բացի այդ, փրկարարի գործը ամենամարդասեր աշխատանքներից է, և հենց այս հանգամանքով պայմանավորված՝ միանշանակ, չէի փոխի մասնագիտությունս:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

- Շատ թեմաներ կան, որոնց շուրջ կարելի է անվերջ խոսել: Թե՛ գիտության, թե՛ արվեստի, թե՛ պատմության, թե՛ սպորտի, և հատկապես՝ Աստծո մասին թեմաները բավականին հետաքրքիր են: Այսպիսի թեմաների շուրջ զրույցներ հաճախ եմ ունենում ամենատարբեր բնագավառի մարդկանց հետ, որոնց ժամանակ կիսվում եմ իմ գիտելիքով և, միևնույն ժամանակ, ստանում նոր գիտելիք:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

- Կյանքի շարժիչ ուժն ինձ համար Աստծո առաջնորդությունն է: Մարդն իր կյանքի ընթացքում դնում է նպատակներ և ձգտում է դրանց հասնել: Եթե դրանք Աստծո կամոք են լինում, և Աստված մարդու հետ է, ապա ոչ ոք չի կարող կանգնեցնել նրան: «Եթե Աստված մեզ հետ է, ո՞վ կկանգնեցնի մեզ», - գրում է Պողոս առաքյալը:

Բլից հարցեր
Պատասխանում ենք կարճ և արագ:

- Երեք բառ, որով կբնորոշես ինքդ քեզ:

- Արդարամիտ, նպատակասլաց և հավատով լի:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Մտաբերում եմ ծրագրերս:

- Օրն սկսում ես ժամը...

- Առավոտյան ժամը 6-ին:

- Սիրածդ աֆորիզմը:

- «Ողորմություն մի՛ խնդրիր այն բանի համար, ինչին կարող ես հասնել խելքովդ և ուժովդ» (Կարեն Դեմիրճյան):

- Սիրելի զբաղմունքդ:

- Զբոսանք, պատմություն, սպորտ:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Լինել կարգուկանոնի մեջ և հայացքը չկտրել նպատակից:

- Իսկ վերջում... (ավելացրու՛ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին):

- ՆԳՆ կրթահամալիրի մեր սովորողներին մաղթում եմ եռանդ ու ջանասիրություն, որպեսզի մեզնից յուրաքանչյուրս գիտակցի և իրագործի այն պահանջը, որը մեր առջև դնում է մեր հայրենիքը և մեր պետությունը:

Հարցազրույցը վարեց
Գ. Բաբաջանյանը

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՊԱՏԻՎՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՍԻՐՏ, ԽԻԶԱԽՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առաջին անգամ երբ կրթահամալիրի ծանր ու պատկառանք ներշնչող դարպասներից ներս ես մտնում, այնպիսի զգացողություն ես ունենում՝ ակարծես քեզ համակում է ոչ թե ուսում ստանալու ցանկությունը, այլ պատվի շնչով ապրելու և արարելու զգացումը: Ավելի պատվավոր ու պատասխանատու գործ չկա, քան ծառայելը հայրենիքին: Դու սկսում ես ապրել հանուն հայրենիքիդ, հանուն հազարավոր մարդկանց, ովքեր իրենց կյանքը հանձնում են քո ձեռքերը: Այստեղ քեզ համար յուրաքանչյուր փորձություն կյանքի նոր ուղի է, որով ի ցույց է դրվում քո կյանքի իրական նպատակը՝ հասնել վտանգին ավելի շուտ, քան վտանգը կհասնի քո թիկունքում թաքնվածին: Մենք և ապագա սերունդներս, ուսանում ենք այստեղ՝ դառնալու մեր մեծերի, փոքրերի ու մայրերի պաշտպանն ու վահանը վտանգից: Դե՛, արդեն իսկ հասկանալի է դառնում, որ, երբ ուսերիդ վրա բազմաթիվ կյանքեր ես կրում, քո միակ նպատակն ուղղակի նրանց ժպիտը տեսնելն է, փրկությամբ կյանք մտած ու ջերմագին հրճվանքը: Բոլորն էլ ձգտում են լավին, բարեկեցությանն ու ապահով կյանքին, ու մարդիկ ուղղակի ուզում են թիկունքին հերոսներ տեսնել. հերոս, որը կերտում է իր և իր ժողովրդի արժանապատվությունն ապահով երկրում: Իսկ եթե չկա ապահով երկիր, չկաս նաև դու:

Պատիվն ու պատասխանատվությունն ասես մետաղադրամի երկու կողմ լինեն, որ հավանականության տեսության դասին էինք անցնում, բայց երկուսն էլ պահանջում են սիրտ, խիզախություն ու կարգապահություն: Ղեկավար կազմի ոգեշնչումը, սիրտը, սերը, կոչը հանուն նոր կյանքերի, տոկուն հավատ է ներշնչում, որ, նույնիսկ, եթե կրակից մեկ անգամ ապտակ ուտես, ապտակի հետ մեկտեղ սկուտեղի մեջ պատիվն էլ կգա, քանի որ, պատվաբեր է այն գործը, որի մեջ կա պարտք, և պատասխանատու է այն մարդը, ով գիտի՝ այդ պարտքը մինչև վերջ պիտի կատարի:

Մուժիկյան Հայկանուշ
Կառավարում բաժին, 2-րդ կուրս

ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում հոկտեմբերի 10-ին Կրթահամալիրի և «Հայաստանի Եվրոպական համալսարան» հիմնադրամի ֆուտբոլի հավաքական թիմերի միջև կայացել է միջբուհական ընկերական ֆուտբոլային հանդիպում:

Հանդիպումը կազմակերպվել էր Կրթահամալիրի ուսանողական խորհրդի և ոստիկանական ուսումնական ստորաբաժանման մարտական, ֆիզիկական և հատուկ պատրաստականության ամբիոնի հետ համատեղ՝ նպատակ ունենալով խթանել առողջ ապրելակերպը, զարգացնել մարզական մշակույթը և ամրապնդել բարեկամական հարաբերությունները երկու բուհերի ուսանողների միջև:

Խաղը տեղի ունեցավ ջերմ ու համերաշխ մթնոլորտում՝ լի մարտական ոգով և սպորտային պայքարով: Թիմերը ցուցադրեցին բարձր մակարդակի խաղ, իսկ

հանդիպումն ավարտվեց 3:6 հաշվով՝ հօգուտ Եվրոպական համալսարանի հավաքականի:

Միջոցառման ավարտին կազմակերպիչները շնորհակալություն հայտնեցին երկու թիմերին՝ ակտիվ մասնակցության, գեղեցիկ խաղի և մարզական բարեկրթության համար՝ ընդգծելով, որ նման նախաձեռնությունները կարևոր են ուսանողական համագործակցության զարգացման և սպորտային արժեքների տարածման գործում:

Ստեղծագործում են մերոնք

ՀԱՎԱՏՈՎ

Քաղաքը լուռ է, փողոցը՝ դատարկ,
Անգամ քարերն են վախից քարացել,
Ամեն քայլի հետ ընկած է մի արկ,
Որ ամեն պահի պատրաստ է պայթել:
Աշխարհը լուռ է, ժեռ քար է դարձել,
Ու չի էլ փորձում ինչ-որ բան փոխել,
Ապրում են նորմալ, ինչպես երբևէ:
Կարծես ոչինչ էլ երբեք չի եղել:
Մինչ այդ աշխարհը իր կյանքն է ապրում,
Սահմանին զինվորը զինվոր է փրկում
Կամ էլ փորձում է ու չի հասցնում,
Վիրավորի հետ ինքն էլ է զոհվում:
Ու սա արդա՞ր է, լա՞վ է մտածված,
Մի՞թե սա էր մեր ճակատին գրված,
Որ պիտի մենք միշտ լացենք ու ծխանք,
Որ պիտի մենք միշտ հերոս ունենանք,
Ու պիտի մենք միշտ կարոտից մղկտանք
Ու ամբողջ կյանքը մեր տանուլ միշտ տանք:
Ապրում են մարդիկ, ինչպես երբևէ,
Ու չեն էլ փորձում հասկանալ մի բան,
Որ ամեն զինվոր մի մեծ արև է,
Մի հզոր սյուն է, ճրագն է իր տան:
Սուտ ու փու՛չ աշխարհ, այս ի՞նչ արեցիր,
Քո լռությունով մեզ սպանեցիր,
Մեր հոգիներում վերքեր բացեցիր,
Հների վրա էլ դու աղ լցրեցիր:
Լա՛վ, դատավճի՞ռ է մեր հայ ծնվելը,
Մեր սրտով էլ չի զենքով կռվելը,
Մարդը մարդու դեմ պատերազմելը:
Պատերազմներում տղերքն են զոհվում,
Տներ են քանդվում պատերազմներում,
Մայրերը որդու կարոտ են մնում,
Իսկ զավակները անհայր մեծանում:
Ու կամաց-կամաց ամբողջ աշխարհին
Լաց ու սուգ է պատելու,
Ու թշնամու հրահրող,
Կեղտոտ ձեռքն են կտրելու...

Մելսիդա Ավետիսյան
շրջանավարտ

ՀՅՈՒՍԻՍ/ՀԱՐԱՎ

Մեր մեջ այնքա՜ն բացահայտումներ եմ արել
Ու այնքա՜ն ապրումներ գտել քո աչքերում,
Մեր ապրած պահերն են անցել գնացել,
Իսկ քո աչքերը տեղում մնացել...
Ինչևէ , օրս տարի է դարձել,
Ու քայլում ենք մենք՝ տարբեր բևեռներ՝
Մտածելով թե միմյանց կգտնենք,
Մինչդեռ բևեռները հյուսիս-հարավ են:
Գուցե քեզ նման շատ շատերը գան,
և գուցե ոչ մեկը նման չլինի քեզ,
Մեկ է, քայլերը կտանեն ուղիղ՝
Անկախ բևեռի հյուսիս հարավից...
Եվ գուցե մենք ենք տրոհվում
Կամ ուզում ենք տրոհվել միմյանցից,
Իսկ քայլերը, ա՜խ, մեզ են ենթարկվում,
Այլ ոչ թե սրտի մերկ գաղափարին....

Մարիետա Մաթոսյան
ոստիկանական ուսումնական
ստորաբաժանում
2-րդ կուրս

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1. Ինչո՞վ է տարբերվում բակտերիան վարակից՝ վիրուսից:
2. Ինչու՞ է երկինքը կապույտ երևում:

Նախորդ համարի պատասխանները

1. Լատիներենը:
2. Երկուսն էլ կատարվել են երազում:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30.09. 2025թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան